

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2011 թվականի N 511-Ն

ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԶԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված ձևին համապատասխան տեղեկությունը կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով կամ փոստի միջոցով՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2.1. Սահմանել, որ շրջանառության հարկ վճարողները՝

1) յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ եռամսյակային տեղեկությունները ներառում են շրջանառության հարկի հաշվարկում.

2) միաժամանակ հաստատագրված և (կամ) արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակներ իրականացնելու դեպքում՝ այդ գործունեության տեսակների մասով յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ եռամսյակային տեղեկությունները նույնպես ներառում են շրջանառության հարկի հաշվարկում և սույն որոշման 1-ին կետով սահմանված ձևով տեղեկություն չեն ներկայացնում:

(2.1-ին կետը լրաց. 21.03.13 N 263-Ն)

2.2. Այն դեպքերում, երբ եռամսյակի ընթացքում հարկ վճարողը դադարում է համարվել շրջանառության հարկ վճարող, ապա այդ եռամսյակի մինչև շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու օրը ներառող ամիսների համար (ներառյալ տվյալ ամսվա այն ժամանակահատվածը, որի ընթացքում հարկ վճարողը չի համարվել շրջանառության հարկ վճարող) յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողները ներկայացնում են սույն որոշման 2.1-ին կետին համապատասխան, իսկ դադարելու օրը ներառող ամսվա հաջորդող ամիսների համար՝ որոշման 1-ին կետով սահմանված ձևին համապատասխան:

(2.2-րդ կետը լրաց. 21.03.13 N 263-Ն)

3. Սահմանել, որ արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողների կողմից համակարգչային սարքավորումների կիրառման դեպքում այդ սարքավորումներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը ներկայացվում է սույն որոշման 1-ին կետով հաստատված ձևով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2011 թ. մայիսի 4
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 14-ի N 511-Ն որոշման

Փաստաթղթի համարը՝ _____

(լրացվում է հարկային տեսչության կողմից)

ՁԼ

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը՝

2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)՝

3. Տեղեկությունը ներկայացվում է 20__թ. _____ ամսվա համար:

NN ը/կ	Հսկիչ-դրամարկղային մեքենայի (համակարգչային սարքավորման) գրանցման համարը	Հսկիչ-դրամարկղային մեքենայով (համակարգչային սարքավորմամբ) իրականացված դրամական հաշվարկների հանրագումարը (դրամ)
1		
2		
3		
...		

Կազմակերպության տնօրեն
(անհատ ձեռնարկատեր)

_____ (ստորագրությունը)

_____ (անունը,
ազգանունը)

Հաշվապահ

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Տեղեկության ստացման ամսաթիվը, ամիսը,
տարեթիվը

_____ 20__թ.

_____ (լրացվում է հարկային տեսչության կողմից)

Առձեռն ներկայացնելու դեպքում տեղեկությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից տեղեկության հաշվառումից (գրանցումից) հետո մեկ օրինակը վերադարձվում է հարկ վճարողին:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան